պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալից ելնելով դատարանը եզրահանգում է, որ հայցվորը «Աուդիտի միավորների առանձին գներ» անվամբ փաստաթուղթը պարտավոր էր ներկայացնել էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված վիճակում՝ ինչը չի արել:

Ինչ վերաբերում է անհամապատասխանությունը շտկելու համար երկրորդ հնարավորությունը տալու հարցին՝ դատարանը փաստում է, որ Կարգը արձանագրված անհամապատասխանությունը երկրորդ անգամ շտկելու հնարավորություն չի ընձեռում:

Նման պայմաններում դատարանը գտնում է, որ հայցն անհիմն է և ենթակա է մերժման:

Դատարանն անդրադառնալով դատական ծախսերի հարցին՝ գտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ Դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցվորը հայցադիմում ներկայացնելիս նախապես վճարել է օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարը և հայցը մերժվում է՝ Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-րդ, 192-րդ հոդվածներով՝ Դատարանը,

ՎՃՌԵՑ

<<Քրոու ընդ Ասատրյանս>> ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ Տավուշի մարզպետարանի՝ ՀՀ Տավուշի մարզպետարանի կողմից ՀՀ Տավուշի մարզպետարանի 2023 թվականի կարիքների համար ներքին աուդիտի ծառայության ձեռքբերման նպատակով 14.12.2022թ. հայտարարված թիվ <<ՀՀՏՄ-ԷԱՃԾՁԲ-23/1>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.01.2023թ. նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ և 4-րդ կետերով կայացված որոշումները, 10.01.2023թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված՝ <<Քրոու ընդ Ասատրյանս>> ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և <<ՀՀՏՄ-ԷԱՃԾՁԲ-23/1>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին, մերժել:

Դատական ծախսերի հարցը հարգված լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան դրա հրապարակմանալուց հետո մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ծանոթություն: Սույն վճռի դեմ վերաքննիչ բողոք չի ներկայացվել, և վճիռը մտել է օրինական ուժի մեջ _____2023թ.:

ԴԱՏԱՎՈՐ Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ